Քարտերի տրամադրման և օգտագործման կանոններ

1. Սահմանումներ

1.1. Բանկ - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ:

1.2. Քարտ/եր/ - VISA/MasterCard/UnionPay տեսակի միջազգային և ԱրՔա (ArCa) տեղական օգտագործման քարտ/եր/: Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:

1.3. Կանոններ - Քարտերի տրամադրման և օգտագործման կանոններ:

1.4. PIN-ծածկագիր - անհատական նույնականացնող համար (Personal Identification Number - PIN), որը կիրառվում է որոշակի գործառնությունների/գործարքների դեպքում Քարտապանին նույնականացնելու համար:

1.5. Պայմանագիր - Վճարային քարտի տրամադրման և օգտագործման պայմանագիր:

1.6. Քարտապան - Բանկի հետ կնքված Պայմանագրի հիման վրա Քարտն օգտագործելու իրավունք ունեցող անձ:

1.7. Հաշվետեր քարտապան - Պայմանագրի կողմ հանդիսացող և Քարտն օգտագործելու իրավունք ունեցող անձ:

1.8. Քարտային հաշիվ - Բանկում բացված հաշիվ, որով կատարվում են գումարների ելքագրում կամ մուտքագրում:

1.9. Վարկային սահմանաչափ - Բանկի կողմից Քարտապանին տրամադրված վարկային գիծ/օվերդրաֆտ /համաձայն կնքվող առանձին պայմանագրի/, որը կարող է օգտագործվել քարտային գործառնությունների/գործարքների համար:

1.10.Վճարային սահմանաչափ - Քարտային հաշվի մնացորդի և Վարկային սահմանաչափի հանրագումարը, որից Քարտապանը կարող է օգտվել:

1.11.Գործառնություն/Գործարք Քարտով - գործառնություն/գործարք, որում Քարտն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու կամ կանխիկի ստացման համար:

1.12.Գործառնության/Գործարքի կատարման օր - Քարտով գործառնությունը/գործարքը կատարելու փաստացի օր:

1.13.Գործառնության/Գործարքի հաշվառման օր - Քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգի կողմից գործառնությունը/գործարքը Բանկի հաշվառմանը ներկայացնելու հիմքով՝ Բանկում Քարտապանի Քարտային հաշվով գործառնությունը/գործարքը հաշվառելու օր:

1.14.Առևտրի/սպասարկման կետ - ապրանքների վաճառքի/ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում, որի կողմից վաճառվող ապրանքների/մատուցվող ծառայությունների դիմաց հնարավոր է վճարել քարտի միջոցով:

1.15.Ավտոմատ գանձման մեքենա (այսուհետ՝ Բանկոմատ կամ ԱԳՄ)՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ ինքնասպասարկող սարք:

1.16.Հավաստագրում - քարտով գործառնության/գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում:

1.17.Ժամկետի ավարտ - Քարտի վրա նշված ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

1.18.Գերածախս - Քարտապանի կողմից Վճարային սահմանաչափից ավելի ծախսված գումար և դրա նկատմամբ հաշվարկված տուժանք:

1.19.Հավելյալ քարտ - նույն Քարտային հաշվի ներքո նույն վճարահաշվարկային համակարգի ներքո տրամադրված լրացուցիչ քարտ:

1.20.Կից քարտ - նույն Քարտային հաշվի ներքո տարբեր վճարահաշվարկային համակարգի ներքո տրամադրված լրացուցիչ քարտ:

1.21.PRIORITY PASS անցաքարտ - Բանկի կողմից թողարկված VISA PLATINUM/VISA INFINITE Քարտի հետ Քարտապանին տրամադրվող անցաքարտ, որի օգնությամբ Քարտապանը մուտք է գործում օդանավակայանների VIP գոտիներ:

1.22.Օֆլայն ռեժիմում կատարված գործառնություններ/գործարքներ - գործառնություններ/գործարքներ, որոնք առցանց /online/ հավաստագրում չեն ստանում:

1.23.Դեբետային քարտ - Քարտ, որը նախատեսված է Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ/գործարքներ իրականացնելու համար՝ Քարտապանի քարտային հաշվում առկա դրամական միջոցների հաշվին:

1.24.Հաշվարկային քարտ - քարտ, որը նախատեսված է Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, կանխիկի մուտքագրման և անկանխիկ գործառնություններ/գործարքներ իրականացնելու համար՝ Քարտապանի քարտային հաշվում առկա դրամական միջոցների և Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի հաշվին:

1.25.Քարտի բլոկավորում - քարտի առցանց /online/ հավաստագրման դադարեցում/արգելափակում:

1.26.Քարտային հաշվի սառեցում - քարտային հաշվով դեբետային/կրեդիտային գործառնությունների արգելափակում:

1.27.3Դ Սեքյուր անվտանգության գաղտնաբառ - Բանկի կողմից տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառ, որը Քարտապանը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով կամ էլեկտրոնային փոստով:

1.28. Մեկանգամյա կիրառման գաղտնաբառ (այսուհետ՝ OTP)՝ Քարտապանի կողմից Բանկին գրավոր ձևով տրամադրված բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտի PIN կոդը ստեղծելու և քարտն ակտիվացնելու նպատակով: PIN կոդը կարող է սահմանվել քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգի մասնակից հանդիսացող բանկի բանկոմատի միջոցով, եթե տվյալ բանկոմատը հագեցած է համապատասխան տեխնիկածրագրային լուծումներով:

1.29. CVV/CVC կոդ - քարտի հետնամասում նշված եռանիշ կոդ:

1.30. Գաղտնաբառ - Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտի և քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ դեպքերում/չշփոթել քարտի PIN-ծածկագրի հետ/:

2. Քարտի տրամադրման պայմանները և գործողության ժամկետը

2.1. Քարտը գործում է մինչև վերջինիս Ժամկետի ավարտը:

2.2. Քարտը ստանալու պահին Քարտապանը պարտավոր է ստորագրել այն հակառակ կողմի ստորագրության դաշտում: Ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը Քարտապանի կողմից ներկայացված և ստորագրության նմուշ պարունակող Քարտապանի անձը հաստատող փաստաթղթին հանդիսանում է օրինական հիմք Քարտի սպասարկումը մերժելու և այն առգրավելու համար՝ առանց որևէ փոխհատուցման:

Քարտի հետ տրամադրվում է ծրար, որը պարունակում է Քարտի PIN-ծածկագիրը, բացառությամբ OTP կիրառմամբ PIN ծածկագրի ձևավորման դեպքի: PIN-ծածկագիրը անհրաժեշտ է բանկոմատներից կանխիկ գումարներ ստանալիս և POS տերմինալներով գործառնություններ/գործարքներ իրականացնելիս: Քարտի PIN-ծածկագիրը տպագրվում է մեկ օրինակով և փակ ծրարով տրամադրվում է Քարտապանին: Քարտի PIN-ծածկագրի պահպանման պատասխանատվությունը կրում է Քարտապանը: PIN ծածկագիրը մոռանալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված համապատասխան հայտ ներկայացնելու միջոցով OTP-ի կիրառմամբ ինքնուրույն սահմանել նոր PIN կոդ կամ Բանկը Քարտապանի դիմումի համաձայն վերաթողարկում է նոր քարտ՝ նոր PIN-ծածկագրով՝ գանձելով Սակագներով սահմանված վճարը: Երեք անգամ անընդմեջ սխալ PIN-ծածկագիր հավաքելու դեպքում Քարտը ավտոմատ արգելափակվում է և/կամ կարող է առգրավվել: Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել PIN-կոդը՝ համապատասխան հնարավորությամբ բանկոմատի միջոցով: PIN-կոդի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող PIN-կոդը և նոր PIN-կոդը: Քարտապանի կողմից քարտի նոր PIN ծածկագիրը սահմանելիս Բանկը հորդորում է սահմանել հնարավորինս բարդ գաղտնաբառ: Խորհուրդ է տրվում չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր:

2.3. PIN ծածկագիրը Քարտապանի կողմից սահմանվելու դեպքում OTP-ն կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է Քարտապանի՝ Բանկին նախօրոք գրավոր տրամադրված բջջային հեռախոսահամարին Քարտապանի կողմից Բանկոմատի միջոցով քարտն ակտիվացնելու համապատասխան հրահանգները կատարելու գործընթացում: Ստացված OTP-ն Քարտապանի կողմից պետք է մուտքագրվի Բանկոմատի համապատասխան դաշտում, որից հետո Քարտապանը կարող է ինքնուրույն սահմանել PIN ծածկագիրը: Սահմանված ժամկետում OTP-ն չստանալու դեպքում, Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

2.4. Քարտի վերաթողարկման դեպքում PIN ծածկագիրը ենթակա է սահմանման Քարտապանի կողմից սույն Կանոնների 2.3 կետի համաձայն, եթե Քարտապանի կողմից նախապես չի ներկայացվել PIN ծածկագրի տրամադրման վերաբերյալ դիմում:

2.5. Բանկը մինչև Դեբետային քարտի Ժամկետի ավարտը՝ Ժամկետի ավարտին նախորդող վերջին 15 օրերի ընթացքում, առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության Քարտը կարող է վերաթողարկել՝ այդ պահին Բանկի կողմից սահմանված Քարտի գործողության ժամկետով՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

2.6. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Քարտապանը Դեբետային քարտի Ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ գրավոր հայտնել է Քարտից հրաժարվելու մասին, Ժամկետի ավարտի պահից Քարտը ճանաչվում է անվավեր և Ժամկետի ավարտից 5 օրվա ընթացքում այն ենթակա է վերադարձման Բանկ կամ պետք է ոչնչացվի Քարտապանի կողմից, ինչը չկատարելու հետևանքները կրում է Քարտապանը: Քարտի Ժամկետի ավարտից հետո Քարտապանը պարտավոր է Քարտը վերադարձնել Բանկ կամ ոչնչացնել այն՝ Քարտը կտրատելով մանր կտորների:

2.7. «Թոշակ» Քարտերի դեպքում վերաթողարկումը կատարվում է Քարտապանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրած վերաթողարկման դիմումի հիման վրա:

2.8. Վճարային /VISA GIFT INSTANT ISSUE/ քարտերի դեպքում վերաթողարկում չի նախատեսվում:

2.9. Հաշվարկային քարտերի դեպքում Քարտի վերաթողարկումը կատարվում է Բանկի կողմից սահմանված Հաշվարկային քարտերի ավտոմատ վերաթողարկման գործընթացների համաձայն:

2.10. Քարտապանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու համար:

3. Քարտի օգտագործումը

3.1. Քարտային հաշիվը բացվում է Քարտով և Քարտային հաշվով գործառնություններ/գործարքներ իրականացնելու համար:

3.2. Քարտապանն իրավունք չունի փոխանցել Քարտը և PIN-ծածկագիրն այլ անձանց:

3.3. Արգելվում է գրել PIN-ծածկագիրը քարտի վրա:

3.4. Ինտերնետ միջավայրում կամ առանց քարտի ներկայության գործարքների իրականացման դեպքում PIN-ծածկագրի մուտքագրում չի պահանջվում և նախատեսված չէ որևէ վճարահաշվարկային համակարգի կողմից, այդ իսկ պատճառով արգելվում է ինտերնետ միջավայրում մուտքագրել/հայտնել PIN-ծածկագիրը: Մուտքագրելու/հայտնելու դեպքում, անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

3.5. Վճարային /VISA GIFT INSTANT ISSUE/ քարտը ինտերնետ միջավայրում կիրառելի է միայն 3D Secure ծառայության ակտիվացման դեպքում:

3.6. Վճարային /VISA GIFT INSTANT ISSUE/ քարտերով չի թույլատրվում կատարել և ստանալ քարտից քարտ փոխանցումներ:

3.7. Քարտն օգտագործելիս անհրաժեշտ է PIN-ծածկագիրը մուտքագրել այնպես, որ տեսանելի չլինի երրորդ անձանց և չտեսաձայնագրվի որևէ սարքի միջոցով:

3.8. Քարտով առևտրի և սպասարկման կետերում վճարում կատարելու կամ կանխիկացման կետերում կանխիկ գումար ստանալու դեպքերում Քարտապանը պարտավոր է ստորագրել կտրոնը /անդորրագիրը/՝ ստուգելով գործառնության/գործարքի գումարը: Ստորագրություն կարող է չպահանջվել, եթե կիրառվել է PIN-ծածկագիր կամ անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագիր, որը դրվում է (կիրառվում է) գործառնությունը/գործարքն իրականացնելու պահին, և կամ գործարքը իրականացվել է անհպում տարբերակով 3.9 կետում նշված սահմանաչափի շրջանակներում:

3.9. Անհպում քարտերի դեպքում ՀՀ-ում մինչև 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով) գործարք կատարելու դեպքում PIN-կոդի մուտքագրում չի պահանջվում: Արտերկրում նշված սահմանաչափը կարող է փոփոխվել՝ կախված տվյալ երկրի համար համապատասխան վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված սահմանաչափերի:

3.10. Տրանսֆեր /Transfer/ քարտերի դեպքում /VISA տեսակի միջազգային և ԱրՔա (ArCa) տեղական օգտագործման քարտ/եր Քարտային հաշվին միջոցներ կարող են մուտքագրվել միայն արագ փոխանցումների համակարգերի միջոցով, Քարտին այլ հաշիվներից կամ կանխիկ գումարի մուտքագրումն արգելվում է:

3.11. Քարտապանը կարող է Քարտով կանխիկ միջոցներ ելքագրել և մուտքագրել, փոխանցումներ և վճարումներ իրականացնել Վճարային սահմանաչափի սահմաններում՝ տվյալ վճարահաշվարկային համակարգի Քարտերը սպասարկող կանխիկացման կամ առևտրի և սպասարկման կետերում:

3.12. Բանկը սահմանափակում է քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման գործառնությունների/գործարքների քանակը և առավելագույն գումարը, որոնք կարող են Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և չափով փոփոխվել քարտապանի կողմից Բանկին դիմելու դեպքում:

3.13. Գործառնությունը/գործարքը համարվում է ելքագրված քարտային հաշվից գործառնության/գործարքի հաշվառման օրը: Գործառնությունը/գործարքը՝ կախված առևտրի/սպասարկման կետի տեսակից, կարող է հաշվառվել մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում: Գործառնության/գործարքի գումարը քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում հաշվառվում է, ինչպես նաև քարտային հաշվի քաղվածքում արտացոլվում է, որպես կանոն, հետևյալ ժամկետներում՝

- ԱՐՔԱ համակարգում կատարված գործառնությունների/գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,
- ԱՐՔԱ համակարգից դուրս կատարվածգործառնությունների/գործարքների դեպքում 2-3 աշխատանքային օր հետո:

3.14. Քարտապանը կարող է անձամբ կամ իր հանձնարարությամբ՝ երրորդ անձի միջոցով Քարտային հաշվին անկանխիկ կամ կանխիկ միջոցներ մուտքագրել: Միջոցների մուտքագրումը կարող է կատարվել նաև այլ եղանակներով, ներառյալ՝ այլ բանկերի, այդ թվում՝ արտասահմանյան թղթակից բանկերի միջոցով:

3.15. Քարտային հաշվից և այլ Բանկերից փոխանցումները քարտին հասանելի են դառնում, որպես կանոն, հետևյալ ժամկետներում.

- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 12:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 11:00-ն,
- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 11:00-15:00-ն,
- մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 18:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 15:00-17:00-ն:

3.16. Բանկի տերմինալներով քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև Բանկի Ինտերնետ բանկ և Մոբայլ բանկ համակարգերի միջոցով բանկային հաշվից քարտին փոխանցումը (բացառությամբ քարտային հաշվից փոխանցումների) քարտի վրա հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 րոպեի ընթացքում (ԱՐՔԱ պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

3.17. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ ոչ Բանկի մեղքով տեխնիկական կամ ծրագրային խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին 3 աշխատանքային օրը գործարքների գումարները կարող են քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:

3.18. Քարտային հաշվին միջոցները կարող են մուտքագրվել նաև վճարահաշվարկային համակարգերի կողմից նախատեսված տարբերակներով /քարտից քարտ փոխանցում, էլեկտրոնային դրամապանակից քարտին փոխանցում, բանկոմատի միջոցով

գումարի մուտքագրում քարտին և այլն/, որոնց դեպքում գումարը քարտին կարող է ակտիվանալ անմիջապես կամ վճարահաշվարկային համակարգերի կողմից տվյալ գումարի մուտքագրման եղանակի համար նախատեսված ժամանակահատվածում: Քարտային հաշվին գումարների մուտքագրման դեպքում գումարը համարվում է մուտքագրված տվյալ գործառնության/գործարքի հաշվեգրման օրը: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների հավաստագրման պահին գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Որպես կանոն նմանատիպ գործարքները հաշվառվում են 1-3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.19. Հաճախորդի քարտային հաշվից Բանկի ծրագրերի տեխնիկական կամ կապի խափանման հետևանքով, ինչպես նաև Բանկի աշխատակիցների մեղքով ավելի գանձված կամ կրկնակի գանձված գումարները հետ են վերադարձվում հաճախորդի քարտային հաշվին խնդիրը Բանկին հայտնի դառնալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում:

3.20. Կանոններն ու Սակագները պարունակում են Բանկի կողմից Քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներ: Այդուհանդերձ՝ ArCa, VISA, MasterCard և UnionPay վճարահաշվարկային համակարգերը կարող են ունենալ Քարտի կոնկրետ տեսակներով գործառնությունների/գործարքների իրականացման հատուկ սահմանաչափեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Բանկի և Քարտապանի կողմից և որոնց չպահպանման հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.21. Քարտը չի կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործառնությունների/գործարքների համար: Քարտային գործառնությունների/գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի առանց Քարտապանին ծանուցելու չթույլատրել գործառնությունը/գործարքը և/կամ բլոկավորել Քարտը և/կամ սառեցնել հաշիվը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել Քարտապանից՝ նախքան համապատասխան գործառնության/գործարքի թույլատրումը:

3.22. Նախքան Քարտով ինտերնետային միջավայրում գործառնություն/գործարք իրականացնելը՝ Քարտապանը պետք է մանրամասն ծանոթանա տվյալ ինտերնետային կայքից գնումների կատարման, առաքման, գործառնության/գործարքի չեղյալացման, ապրանքների վերադարձման պայմաններին, ինտերնետային կայքում կոնտակտային տվյալների առկայությանը:

3.23. Ինտերնետային միջավայրում քարտով գործառնություն/գործարք իրականացնելիս Քարտապանը պետք է օգտվի ճանաչված և հուսալի կայքերից, ինչպիսիք են Secure Sockets Layer (SSL) սերտիֆիկատ, Verified by Visa անվտանգության համակարգ, MasterCard SecureCode, UnionPay 3-D secure և այլ անվտանգության համակարգեր ունեցող կայքերից: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3Դ Սեքյուր անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

3.24. Խորհուրդ չի տրվում օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերից և սարքավորումներից, որոնք Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե վերջիններիս քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:

3.25. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության/գործարքի հավաստագրման պահին գործառնության/գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են ARCA/VISA/MasterCard/ UnionPay վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում VISA վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժութային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.26. Քարտապանը Քաղվածքի ձևավորման պահից 1 /մեկ/ տարվա ընթացքում /եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կանոններով/ կարող է բողոքարկել Քաղվածքում արտացոլված գործարքները՝ Բանկի կողմից սահմանված ձևով լրացված հայտով՝ դրան կցելով իր բողոքը հիմնավորող փաստաթղթերը: Խորհուրդ է տրվում որևէ անհամապատասխանության կամ չարտոնված գործարք նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին:

3.27. Բանկը վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան կօժանդակի Քարտապանի կողմից բողոքարկված գործարքի գումարի վերականգնմանը քարտային հաշվին, սակայն գումարի վերականգնման անհնարինության դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

3.28. Քարտային գործարքների բողոքարկման պայմանները, ընթացակարգերն ու ժամկետները սահմանվում են վճարահշվարկային համակարգերի կողմից:

3.29. Բողոքարկման հայտին ի պատասխան 90 օրյա ժամկետում Բանկը կամ վերականգնում է բողոքարկվող գործարքի գումարը քարտային հաշվին կամ Քարտապանին տրամադրում է գրավոր պատասխան՝ գումարի վերադարձման անհնարինությունը հիմնավորելով: Առանձին դեպքերում, Քարտապանին պատշաճ ծանուցելով, հնարավոր է պատասխան գրությունը տրամադրվի կամ գումարը վերականգնվի սահմանված 90 օրյա ժամկետից ուշ՝ ելնելով վճարահաշվարկային համակարգերի կանոններից կամ այլ չնախատեսված հանգամանքներից:

3.30. Քարտապանը պարտավոր է պահպանել բոլոր վճարային փաստաթղթերը՝ կապված Քարտով գործառնությունների/գործարքների հետ մինչև Քարտային հաշվից Քաղվածքի ստացումը, ստուգել Քաղվածքում նշված գործառնությունները/գործարքներն իրականում կատարված ծախսերի հետ և անհամապատասխանությունների առկայության դեպքում՝ Կանոնների 3.26 կետում սահմանված ժամկետում հայտնել դրանց մասին Բանկին: Բանկն իրավունք ունի մերժել նշված ժամկետից ուշ ստացված բողոքները:

3.31. Քարտով գործառնությունները/գործարքները պետք է իրականացվեն Վճարային սահմանաչափի սահմաններում: Վճարային սահմանաչափը գերազանցելու համար գանձվում է տույժ՝ սահմանաչափը գերազանցած գումարի նկատմամբ՝ համաձայն Սակագների և/կամ Պայմանագրի: Նշված դեպքում Քարտը կարող է արգելափակվել մինչև պարտքի մարումը:

3.32. Քարտի գծով կարող է ձևավորվել գերածախս կախված գործարքների որոշ տեսակների (հյուրանոցների ամրագրման գործարքներ, ավտովարձույթի սպասարկման կետերում կատարված գործարքներ, տուրիզմի և զվարճանքի ոլորտի սպասարկման կետերում կատարված գործարքներ և այլն) առանձնահատկություններից. սպասարկող բանկի կողմից գործարքի ներկայացման ժամկետներից, ծրագրային խնդիրներից, սպասարկման կետի կողմից կատարված հետվճարներից/հետվերադարձերից, օֆլայն ռեժիմում կատարված գործարքներից, Բանկի կողմից սահմանված միջնորդավճարներից, արտարժույթի փոխանակման գործարքներից և այլն:

3.33. Պայմանագրի լուծման վերաբերյալ Քարտապանի գրավոր դիմումը ստանալու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բանկը դադարեցնում է Քարտի սպասարկումը՝ մարելով Բանկի հանդեպ Քարտապանի ունեցած և Քարտի սպասարկումը դադարեցնելուց 45-օրյա ժամկետի ընթացքում ձևավորված պարտավորությունները՝ Բանկում Քարտապանի ունեցած հաշիվներին առկա գումարներից: Սույն կետում սահմանված դեպքում Քարտային հաշվին առկա բացասական մնացորդը ենթակա է վճարման Քարտապանի կողմից բացասական մնացորդը ձևավորվելու պահից 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:

3.34. Քարտի սպասարկման դադարեցման դեպքում Քարտապանը շարունակում է պարտավորություն և պատասխանատվություն կրել այն գործառնությունների/գործարքների վճարման համար« որոնք կատարվել են նախքան Քարտի սպասարկման դադարեցումը և/կամ Քարտը Բանկին հանձնելը (ոչնչացնելը):

3.35. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ բանկոմատում« կանխիկացման կամ առևտրի և սպասարկման կետում /այդ թվում՝ ինտերնետային միջավայրում գրանցված/ Քարտի /այդ թվում՝ գործողության ժամկետը լրացած Քարտի/ չսպասարկման կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:

3.36. Քարտի չլիազորված օգտագործման կամ նման օգտագործման վտանգի դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին /խնդրելով արգելափակել Քարտի օգտագործումը/ Կանոնների 4.1 կետում նշվածեղանակներով: Մինչ 4.1 ենթակետում նշված կարգով Բանկին ծանուցելու պահը Քարտով կատարված գործառնությունների/գործարքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.37. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտով կատարված այն գործառնությունների/գործարքների հետևանքով Քարտապանին պատճառված վնասների համար, որոնք իրականացվել են.

3.38. միկրոպրոցեսորային (չիպային) քարտի միջոցով՝ PIN-ծածկագրի մուտքագրմամբ,

3.38.1. Քարտի մագնիսական ժապավենի և/կամ Քարտի վրայի չիպի ֆիզիկապես և/կամ Քարտի ետնամասում նշված CVV2/CVC2 ծածկագրի ընթերցմամբ/մուտքագրմամբ և թողարկող բանկի կողմից ստանում են օնլայն հավաստագրում /անգամ այն դեպքերում, եթե գործառնության/գործարքի անդորրագրում առկա ստորագրությունը տարբեր է Քարտապանի փաստացի ստորագրությունից/: Անհպում տարբերակով ընթերցմամբ քարտային գործարքների հետ կապված Բանկի պատասխանատվությունը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի 04.11.2014թ-ի թիվ 300-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.38.2. Օֆլայն ռեժիմում, եթե դրանք կատարվել են նախքան հաճախորդի կողմից Բանկին Քարտը վերադարձնելը և/կամ միջազգային բլոկավորման համակարգում տեղադրված չլինելու ժամանակահատվածում,

3.38.3. 3Դ Սեքյուր /3D Secure/ հավաստագրում ստացած, ինչպես նաև 3Դ Սեքյուր անվտանգության համակարգ ապահովող կայքերում կատարված, սակայն 3Դ Սեքյուր հավաստագրում չստացած առցանց գործառնությունների/գործարքների համար:

3.39. Քարտապանը պատասխանատվություն չի կրում օֆլայն ռեժիմում կատարված այն գործառնությունների/գործարքների համար, որոնք կատարվել են քարտը միջազգային բլոկավորման համակարգում տեղադրված լինելու ժամանակահատվածում:

3.40. Քարտը Բանկի կողմից տեղադրվում է միջազգային բլոկավորման համակարգում, եթե առկա է Քարտը արտասահմանյան երկրում չլիազորված օգտագործելու իրական վտանգ, որի դեպքում Քարտապանը պարտավոր է վճարել Սակագներով սահմանված միջազգային բլոկավորման համակարգում տեղադրման վճարը՝ անկախ քարտի բլոկավորված կամ փակված լինելու հանգամանքից:

3.41. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում քարտի կիրառմամբ գործարքների կատարումը և արգելափակել քարտը, եթե քարտի տվյալները/քարտի վերջնաժամկետը, CVV2/CVC2 ծածկագիրը/ ինտերնետ միջավայրում մի քանի անգամ սխալ է մուտքագրել:

3.42. Ելնելով Քարտապանի շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ Քարտային հաշվով 6 /վեց/ ամիս և ավելի շրջանառություն չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանի սառեցնել Քարտային հաշիվը և բլոկավորել Քարտը՝ առանց այդ մասին Քարտապանին լրացուցիչ տեղեկացնելու, ինչը, սակայն, չի սահմանափակում Բանկի իրավունքը՝ իր հանդեպ Քարտապանի ունեցած վճարային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով համապատասխան գումարներ գանձել Քարտային հաշվից:

3.43. Բանկն իր նախաձեռնությամբ կարող է Քարտը բլոկավորել, իսկ Քարտային հաշիվը սառեցնել հետևյալ դեպքերում, եթե.
3.43.1. Քարտապանը Բանկի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ,
3.43.2. Քարտապանը ժամանակին չի կատարել Սակագներով սահմանված վճարումները,
3.43.3. պետական իրավասու մարմիններից ստացվել է բլոկավորման համապատասխան գրություն,
3.43.4. Բանկն իր կողմից կատարվող մոնիթորինգի ժամանակ հայտնաբերել է կասկածելի զեղծարարական գործառնություններ/գործարքներ,
3.43.5. առանձին դեպքերում Բանկն իրավասու է նաև սեփական նախաձեռնությամբ Քարտը տեղադրել միջազգային բլոկավորման համակարգում:
3.44. Բանկը կարող է Քարտը ապաբլոկավորել, իսկ Քարտային հաշիվը ապասառեցնել, եթե.
3.44.1. Քարտապանը մարել է ժամկետանց պարտավորությունները,
3.44.2. Քարտապանը վճարել է Սակագներով սահմանված վճարումները,
3.44.3. պետական իրավասու մարմիններից ստացվել է ապաբլոկավորման համապատասխան գրություն,
3.44.4. Բանկն իր կողմից կատարվող մոնիթորինգի ժամանակ հայտնաբերած կասկածելի զեղծարարական գործառնությունների/գործարքների գծով ստացել է բանավոր կամ գրավոր հաստատում Քարտապանի կողմից դրանց ոչ զեղծարարական լինելու վերաբերյալ,
3.45. Բանկը հնարավորություն է ընձեռում Քարտապանին ստանալ իր Քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS /կարճ/ հաղորդագրություններ /որոշ քարտատեսակների համար անվճար/՝ այդպիսով հնարավորինս կանխելով Քարտի չլիազորված օգտագործումը:
3.46. Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես Քարտապանը պետք է հավաստիանա, որ գործառնությունը/գործարքը կատարվել է իր կամ իր կողմից լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ:
3.47. Քարտի չլիազորված օգտագործման դեպքում Քարտապանը պարտավոր է տեղեկացնել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին կամ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին՝ զանգահարելով Կանոնների 4.1 կետում նշված հեռախոսահամարներով՝ հայտնելով իր Քարտի դիմումում նշված գաղտնաբառը (խոսքը PIN-ծածկագրի մասին չէ):
3.48. Չլիազորված օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում Քարտը շտապ բլոկավորվում է և Բանկը, Քարտապանի դիմումի հիման վրա, ուսումնասիրում է գործառնության/գործարքի մանրամասները և, անհրաժեշտության/հնարավորության դեպքում, սկսում գործառնության/գործարքի բողոքարկման գործընթացը:
3.49. PRIORITY PASS անցաքարտի օգնությամբ օդանավակայանների VIP գոտիներ իրականացված մուտքերի դիմաց գանձումները կատարվում են Քարտապանի Քարտային հաշվից՝ անակցեպտ կարգով՝ առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնությունը ստանալու:
3.50. Բանկն իրավասու է Քարտապանից պահանջել Քարտի օգտագործման արդյունքում Քարտապանի մեղքով, ինչպես նաև Քարտի կորստի/գողացվելու դեպքում մինչև Բանկին տեղեկացնելու պահը կատարված գործառնությունների/գործարքների համար միջազգային վճարահաշվարկային համակարգերին Բանկի կողմից վճարված գումարները:
3.51. Բանկն իրավասու է դադարեցնելու Քարտապանի բաժանորդագրությունը որևէ կասկածի և/կամ անընդմեջ 3 անգամ գործարքի հավաստագրում չստանալու դեպքում:

4. Քարտի կորուստը

4.1. Քարտի կորստի /գողացվելու/ դեպքում, այն արգելափակելու համար Քարտապանը պարտավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ զանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով կամ.
4.1.1. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.

- ✓ ժամը 9:00-22:00՝ (+37410) 511-210, (+37410) 511-211
- ✓ շուրջօրյա՝ (+37410) 545 514:

Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:
4.1.2. «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ (+37410) 592-222 հեռախոսահամարով՝ Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին:
4.1.3. ուղարկելով պատշաճ գրավոր հաղորդագրություն (+37410) 511-212 ֆաքսով կամ card@conversebank.am էլ. հասցեով կամ ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:
Ընդ որում, Բանկը համարվում է Քարտապանի կողմից սույն կետով նշված միջոցներով ծանուցված՝ Բանկի կողմից Քարտապանի հաղորդագրության ստացման վերաբերյալ հավաստումը Քարտապանի կողմից ստանալու պահից:
4.2. Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ՝ ամենաուշը 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում, տեղեկացնել Բանկին: Քարտը ապաբլոկավորելու համար Քարտապանը կարող է զանգահարել 4.1.1 կետով նշված Բանկի հեռախոսահամարներով կամ ուղարկել պատշաճ գրավոր հաղորդագրություն 4.1.3 կետի համաձայն:
Քարտի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո:

5. Քարտապանի և Բանկի հաղորդակցումը

5.1. Բանկի և Քարտապանի միջև փաստաթղթերի առաքումը (ներառյալ՝ Պայմանագրի, Կանոնների և Սակագների փոփոխությունների մասին Քարտապանին ծանուցելն ու Քարտային հաշվի Քաղվածքները վերջինիս տրամադրելը) իրականացվում է Քարտի ստացման դիմումում նշված Քարտապանի նախընտրած եղանակով:

5.2. Եթե Բանկի և Քարտապանի միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պատասխանատվություն չի կրում փաստաթղթերի հանձնման ուշացման կամ չհանձնման, ինչպես նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար:

5.3. Բանկն իրավունք ունի ձայնագրել Բանկի և Քարտապանի բանավոր հաղորդակցությունը, ներառյալ՝ հեռախոսային խոսակցությունները, ինչի համար Քարտապանը սույնով տալիս է իր անվերապահ համաձայնությունը: Կատարված ձայնագրությունները ծառայում են ապացույց հնարավոր տարաձայնությունների կարգավորման ժամանակ:

6. Հավելյալ/Կից քարտ

6.1. Հաշվետեր Քարտապանից ստացված հայտի հիման վրա Բանկը կարող է թողարկել մեկ կամ մի քանի Հավելյալ/Կից քարտեր՝ Հաշվետեր Քարտապանի կողմից նախապես նշված անձանց անունով՝ Բանկին տրամադրելով Հավելյալ/Կից Քարտապանների վերաբերյալ հավաստի տեղեկություններ:

6.2. Հավելյալ/Կից Քարտը կարող է օգտագործվել միայն այն անձի կողմից, որի անունով այն թողարկվել է:

6.3. Հաշվետեր Քարտապանը պարտավոր է ծանոթացնել Հավելյալ/Կից Քարտապանին՝ Կաննոներին և Պայմանագրի դրույթներին:

6.4. Հավելյալ/Կից քարտերի վրա տարածվում են Կանոնները:

6.5. Հավելյալ/Կից քարտերով կատարվող բոլոր գործառնությունների/գործարքների գումարները գանձվում են Քարտային հաշվից:

6.6. Քարտի փակման դեպքում փակվում են նաև Հավելյալ/Կից քարտերը:

6.7. Հավելյալ/կից Քարտապանի կողմից կատարված գործառնությունների/գործարքների, այդ թվում՝ Գերածախսի համար պատասխանատվությունը կրում է Հաշվետեր քարտապանը: